Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.09.2020թ. թիվ 2011614838 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<22>> 10 2020թ. 7-13- 13404 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով Ռուբեն Ալավերդյանի ՄԴ/137477-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 1-ին թաղամասի 12 շենքի 1-ին բնակարանի բնակիչ Ռուբեն Ալավերդյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011614838 որոշումը՝ նշելով, որ կանգ գիծ գծանշումը հատել է լուսացույցի դեղին ազդանշանի առկայությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական բողոքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի **3-րդ** ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի, լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար: Նույն որոշման 19-րդ կետի համաձայն՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը: Այդ ազդանշանի դեպքում երթևեկելի մասի վրա

գտնվող հետիոտները պետք է ազատեն այն, իսկ եթե դա հնարավոր չէ, կանգ առնեն հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող գծի վրա:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութի ուսումնասիրությամբ ակնհայտ է դառնում այն փաստը, որ 30.08.2020թ. ժամը 16:39-ին Երևան քաղաքի Փափազյան - Էմին փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրած վայրում առկա է <<Կանգ-գիծ>> գծանշումը և դիմումատուի կողմից այն հատելու պահին միացված է եղել **լուսացույցի դեղին արգելող ազդանշանը**:

Այսպես՝ տեսանյութի 16:39:16-րդ վայրկյանին միանում է լուսացույցի **դեղին արգելող ազդանշանը**, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև: Դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է տեսանյութի 16:39:18-րդ վայրկյանին՝ լուսացույցի **դեղին արգելող ազդանշանի առկայությամբ**: Փաստերի վերլուծության արդյունքում հերքվում է նաև դիմումատուի կողմից ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջների ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ դիմումատուն <<Կանգ-գիծ>> գծանշումը հատելուց առաջ գտնվել է կանգնած վիճակում, այսինքն դիմումատուն հնարավորություն է ունեցել կանգնել առանց կտրուկ արգելակման:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.09.2020թ. թիվ 2011614838 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ռուբեն Ալավերդյանին:

Ե. Կարապետյան

Կատարող՝ Գ.Սարգսյան
Հեռ. 060 83-84-02